

հաճոյք պատճառեց. ասոր համար հրաման
ըրին, որ Ձեր Սրբութիւնը հաճի ըստ պատ-
շաճից իմացնել (մեզ) ինչ որ տեղի կ'ունենայ
այս միջոցին, այսինքն ինչ պատասխան որ
պիտի տայ Մովսէս կաթողիկոս ի մասին Լէո-
պոլսոյ հայ արքեպիսկոպոսին առ նա ուղար-
կած յօդուածներուն: Որովհետեւ յիշեալ կա-
թողիկոսին հետ նկատմամբ միութեան բա-
նակցութիւններ կը վարուին Պարսկաստանի
Կարմեղեան առաքելութեան միջոցաւ եւ շատ
կարեւոր պիտի ըլլայ այս միւս ճանապարհով
իմանալ թէ ի՞նչ են անոր զգածմունքները այս
նիւթի մասին:

Ասկէ զատ հոս կը գտնուի Բոկոտն կար-
մեղեան Հ. Թադէոս, որ երկար ժամանակ
իրբեւ առաքեալ գործած է Պարսկաստանի
մէջ. եւ կը պատմէ թէ այն Խաչատուրին
հետ խօսք մէկ ըրած է Հռոմ իրարու պա-
տահելու. եւ կը հաւաստէ յիշեալ Հայրը, թէ
նոյն Խաչատուր Հռոմ պիտի դար յիշեալ կա-
թողիկոսի հրամանաւ բանակցելու միութեան
մասին: Կրնայ ճիշդ ըլլալ Ձեր սրբութեան
ակնարկութիւնն թէ անիկա Կ. Պոլիս մօլոր-
ցուած ըլլայ: Անոր համար լաւ պիտի ըլլայ,
եթէ Դուք փորձէիք անոր բերանը եւ կամ
փորձէիք խօսիլ Լէոպոլսոյ Բոկոտն Կարմե-
ղեանց հետ, որպէս զի աշխատէին զանիկա
ուղիղ ճամբան հանել եւ օգնէին անոր, որ
ճանապարհը չարունակէ մինչեւ Հռոմ, վա-
րելու համար այն բանակցութիւնը, որուն